ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«07» փետրվարի 2025թ. N ՄՈ/200 -Ա

ք. Արմավիր

«ՋԱՆՖԻԴԱՅԻ Է.ԴԱՇՏՈՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2025 թվականի հունվարի 31-ի N ՄՈ/192-Ա որոշումը, «Ջանֆիդայի Է.Դաշտոյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում փաստաթղթերի և գույքի հանձնման-ընդունման աշխատանքները կազմակերպելու նպատակով.

որոշում եմ՝

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին (Ա.Հակոբյան)՝ հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել «Ջանֆիդայի Է.Դաշտոյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հաշվապահ Սուրեն Միրզոյանին (համաձայնությամբ):

3. Հանձնաժողովին (Ա.Հակոբյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել հինգ աշխատանքային օրվա ընթացքում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը՝(Ա.Հակոբյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
5. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչությանը (Դ.Դավթյան)՝ աշխատանքներն իրականացնելու համար ապահովել հերթապահ մեքենայի տրամադրումը:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

2025-02-07 09:32:57 GMT+4
Հավաստագրված է ԷԿԵՆՅ-ի կողմից

eID

ՄԱՐԶՊԵՏ՝ **Ա.ՄԵԽԱԿՅԱՆ**

Հավելված

Հայաստանի Հանրապետության

Արմավիրի մարզպետի

2025 թվականի փետրվարի 07-**ի**

N ՄՈ/200 **-Ա որոշման**

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝

Ա.Հակոբյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետի պարտականությունները կատարող

Անդամներ՝

Ս.Սաֆարյան- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության գլխավոր մասնագետ

Լ.Ղազարյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության ավագ մասնագետ

Հանձնող՝

Ս.Պետրոսյան

«Ջանֆիդայի Է.Դաշտոյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները կատարող

Ընդունող՝

Ս.Միրզոյան

«Ջանֆիդայի Է.Դաշտոյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող

Недействительная подпись

VERIFIED OCSP 07.02.2025 09:30:51 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ